ջուլհականոցի սայլը՝ մանող ու գզող աշխատաւորուհիներով։ Երեկոյեան քաղաքը հրավառուած էր։ Ժողովրդի համար կազմակերպուած էին ձրի դասախօսութիւններ, շարժապատկերի ներկայացումներ, գրօսանք քաղաքային պարտէզում։

Նոյն խանդավառութիւնն ու հանդիսաւորութիւնը և Վաղարշապատում։ Քաղաքը պճնազարդուած էր գոյնզգոյն։ Քաղաքի հրապարակում և ճեմարանի դրան առջև կանգնեցուած էին ազատութեան կամարներ։ Շրջակայ գիւղերից ժողովուրդը խումբ-խումբ, դրօշակներով ու երգերով, լեցուել էր քաղաք։ Զօրք, ժողովուրդ, բանւորներ, աշակերտներ, հիմնարկութեանց ներկայացուցիչներ խռնւում էին էջմիածնի բակում։ Հանդիսաւոր պատարագից ու հանրապետական մաղթանքից յետոյ եղան ողջոյններ ու ճառեր և կատարուեց զօրահանդէս։ Յետոյ քաղաքի դանազան մասերում տեղի ունեցան միտինգներ, շքերթ, ժողովրդական հանդէսներ ու ճաշկերոյթ։ Երեկոյեան՝ հրավառութիւն։

Համաժողովրդական հանդէսներ կատարուեցին և Կարսում, Նոր-Բայազէտում, Դիլիջանում, Ղարանլուխում, Փարաքարում, Արդահանում, Իգդիրում, Ջալալ-Օղլիում, Քեշիշքեանդում — ամէն տեղ։ Երբե՛ք, մինչև այդ, Հայաստանի ժողովուրդը նման ուրախութիւն չէր յայտնաբերել, երբե՛ք «Մեր Հայրենիք»-ը չէր հնչել այնպէս անկեղծ, լիաթոք ու խրոխտ։ Հայաստանի բոլոր ծայրերում, ամենքի բերանից լսւում էր —

Մեր Հայրենիք, ազա՛տ, անկա՛խ,

Մեր թշնամուց ազատուած...